

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ – ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՀԱԿԱՆՇՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.161*

ԱՄՓՈՓՈՒՄ

Համեմատություն-դարձվածային միավորները (այսուհետև՝ ՀԴՄ) խոսքի պատկերավորության հիման վրա առաջացած երկանդամ կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերափմաստավորված կապակցություններ են: Անվանողական ՀԴՄ-ներում առանձնացվում են ածականական, բայական և մակբայական հականիշ ՀԴՄ-ներ: Հականիշ ՀԴՄ-ները դասակարգվում են նաև ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների: Բազմիմաստ ՀԴՄ-ների համար բնութագրական են հոմանշային և հականշային հարաբերությունները: Բազմիմաստությունն ու հականշությունն ակնառու ընդհանրություններ ունեն. միևնույն դարձվածքը այլ ՀԴՄ-ների հետ հականշային հարաբերությունների մեջ է մտնում ոչ թե ամբողջությամբ, այլ իր առանձին իմաստներով: Հականիշ ՀԴՄ-ների հուզարտահայտչական տարբեր գունավորումները, իմաստային բևեռայնությունն առավել ցայտուն դրսևորվում են խոսքային միջավայրում:

Բուհական համակարգի բանասիրական ֆակուլտետներում ժամանակակից հայերենի հականիշ ՀԴՄ-ների ուսուցման հարցերը հողվածում քննության են առնվել հոմանշություն և հականշություն, բազմիմաստություն և հականշություն փոխհարաբերությունների վերհանման միջոցով: ՀԴՄ-ների հականշային շարքերն ուսուցանելիս կարելի է դրանք քննարկել հոմանշային շարքերին զուգընթաց (հականշության առկայություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև. հականշահոմանշային շարքերի կազմություն): Առաջարկվում է ուսանողների՝ ըստ **դասախոսության** ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ ըստ **խմբավորում և հասկացությունների քարտեզ**

մեթոդական հնարների, **տեքստային աշխատանք, խմբային հետազոտություն** և **հարցում** մեթոդների, վարժությունների, առաջադրանքների, բառարանային և ստեղծագործական աշխատանքների, ինչպես նաև համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացման:

Քանալի բառեր և արտահայտություններ. համեմատություն-դարձվածային միավորներ, հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների, ածականական, բայական և մակբայական հականիշ ՀԴՄ-ներ, ՀԴՄ-ների հականշահոմանշային շարքեր, հականշություն և բազմիմաստություն, հականշություն և խոսքային միջավայր, բուհական ուսուցում, փոխներգործուն մեթոդներ, մեթոդական հնարներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համեմատություն-դարձվածային միավորների հիմքում ընկած պատկերավոր համեմատությունն արտահայտում է որևէ առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության, այլև հատկանիշի հարաբերությունը մեկ այլ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ (**Բադիկյան Խ., 2000**):

Այդ կարգի կապակցությունները լայն գործածություն ունեն հայերենում և ըստ լեզվի զարգացման գոյավիճակների՝ ցուցաբերում են իմաստակառուցվածքային յուրահատկություններ: Դրանք, միաժամանակ, ծառայում են տեքստի գեղարվեստական ոճավորմանը (**Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., 2015**):

ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ է երեք անդամ. Երեխան (1. համեմատության առարկան) ձկան պես (2. համեմատության հենակետը) լուռ է (3. այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ առարկային, թե՛ հենակետին): Երեխան (1) լուռ է (3) ինչպես ձուկը (2): Աղջիկը (1) մոմի պես (2) հալվում է (3): Աղջիկը (1) հալվում է (3) ինչպես մոմը (2): ՀԴՄ-ների կազմում մշտական անդամներ են համարվում վերջին երկուսը: Այդ պատճառով էլ ՀԴՄ-ները կոչվում են երկանդամ

կայուն կապակցություններ: Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ները կազմվում են առավել հաճախ պես և նման կապերով, այլև՝ չափ, ինչպես (որպես), իբրև, ասես, կարծես, ոնց որ համեմատական բառերով. քարի նման լուռ, թռչունի պես ազատ, մի բաժակ ջուր խմելու չափ հեշտ, չոր ու ցամաք որպես կմախք, թափվել ինչպես առատության եղջյուրից, իբրև մորից նոր ծնված, կարծես ասեղների վրա նստած լինել, ոնց որ պատին ասես, ասես որոտ պարզ երկնքից և այլն (Ավետիսյան Լ., 2018):

Ըստ իմաստային (միջկապակցական) հարաբերությունների՝ ՀԴՄ-ներում առանձնացվում են հոմանշային և հականշային կապակցություններ: Դարձվածային հականշությունը հոմանշության համեմատությամբ ավելի քիչ տարածված և առավել պակաս հետազոտված լեզվական երևույթ է:

Ներկա հոդվածում քննարկվում են ժամանակակից հայերենի հականիշ ՀԴՄ-ների բուհական ուսուցման հարցերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուհական համակարգի բանասիրական ֆակուլտետներում ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների հականշության ուսուցումը հոդվածում տրված է՝ ըստ պրակտիկ գործողության, փոխներգործուն (ինտերակտիվ) և վերահսկող-գնահատող մեթոդների ու հնարների:

Առաջարկում ենք թեմայի ավանդումն իրականացնելիս կիրառել **դասախոսություն, խմբային հետազոտություն, տեքստային աշխատանք, հարցում, վարժություններ և առաջադրանքներ** մեթոդները, **խմբավորում և հասկացությունների քարտեզ (Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., 2008)** մեթոդական հնարները, ինչպես նաև համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացումը (**Раджабов Б., 2017**), որը լեզվական իրողությունների ուսուցման միջոցներից մեկն է:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դարձվածաբանական իմաստաբանության արդիական խնդիրներից մեկն ինչպես ԴՄ-ների ներսում (ներկապակցական իրողություններ), այնպես էլ նրանց

միջև (միջկապակցական իրողություններ) առկա իմաստային տարաբնույթ հարաբերությունների, այլև նրանցում գործող իմաստային փոփոխությունների բացահայտման հարցն է:

Տվյալ հոդվածը գրվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում հեղինակի դասավանդման փորձի ընթացքում:

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների հականշության (տեսական և գործնական) ուսուցմանն առնչվող նյութերը, որոնք բերված են ստորև, էլեկտրոնային տարբերակով (առցանց ուսուցման հարթակում) կանխավ տրվում են ուսանողներին:

Դասախոսություն

ա) Դասախոսության թեմայի անվանում. Հականշությունը համեմատություն-դարձվածային միավորներում

բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր. հականշությունը համեմատություն-դարձվածային միավորներում. հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի, ՀԴՄ-ների հականշային շարքերը, հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների, հականշություն և բազմիմաստություն, հականիշ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում:

գ) Դասավանդման և ուսումնառության մեթոդներ և հնար(ներ). դասախոսություն, գծագրական դասակարգիչ, առաջադրանքներ, խմբային հետազոտություն, տեքստային աշխատանք, հարցում:

դ) Դասախոսության տեքստ (բովանդակություն) և էլեկտրոնային նյութեր. Թե՛ բառերի, թե՛ դարձվածքների իմաստաբանական այս խումբը հատկանշվում է իմաստային բևեռայնությամբ. հականշության համար անհրաժեշտ է հասկացական հակադրություն: Ե՛վ հականիշ բառերը, և՛ հականիշ դարձվածքները ձևով տարբեր (կամ մասամբ տարբեր) են լինում, սակայն կարևորը նրանցում առկա իմաստային հակադրությունն է: ՀԴՄ-ների

հականշությունը ոչ թե նրանց առանձին բաղադրիչների, այլ նրանց ընդհանուր իմաստային հակադրության հետևանք է (**Игнатьева Л., 1976**):

1. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի. Ընդհանրապես թե՛ բառերի, թե՛ դարձվածքների հականշային շարքի անդամների միևնույն խոսքիմասային պատկանելությունն անհրաժեշտություն է: Ժամանակակից հայերենում առկա են ածականական, բայական և մակբայական հականշային ՀԴՄ-ներ:

ա) Ածականի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ. կաթի պես ճերմակ – ածուխի պես սև, դառն ինչպես լեղի – քաղցր որպես շաքար, արևի // ցերեկվա լույսի պես պարզ – գորոյան հանգույցի պես բարդ, գունատ ինչպես պատի ծեփը – կարմիր ինչպես վարդի թերթը, շուն ու կատվի պես – մի դռան երկու շան նման, սև ուրբաթի պես – երկնքի թռչունների պես և այլն:

բ) Բայի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ. տարբերվել ինչպես երկինքը երկրից – ջրի երկու կաթիլի պես նման լինել (իրար), կարծես փշերի վրա նստած լինել – կարծես մոր գիրկն ընկնել, սովերի պես հետևել – փախչել ինչպես ժանտախտից և այլն:

գ) Մակբայի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ. Ժամանակակից հայերենում բուն մակբայներով ՀԴՄ-ներ հիմնականում չկան: Որոշ ՀԴՄ-ներ շարահյուսական կիրառության մեջ, նայած լրացյալին, կարող են դիտվել կա՛մ իբրև ածականներ, կա՛մ իբրև մակբայներ: Հմմտ. դառն ինչպես լեղի – շաքարի նման քաղցր (խոսք), (ած.), դառն ինչպես լեղի – շաքարի նման քաղցր (խոսել), (մկբ.), կրակի նման – կրիայի նման (ընթացք), (ած.), կրակի նման – կրիայի նման (ընթանալ), (մկբ.) և այլն:

2. ՀԴՄ-ների հականշային շարքերը. Առհասարակ ԴՄ-ների հականշային շարքերին անդրադառնալիս հարկ է դրանք քննարկել հոմանշային շարքերի հետ զուգընթաց. հականիշ դարձվածքները մյուս դարձվածքների հետ մտնում են հոմանշային հարաբերությունների մեջ՝ կազմելով հականշահոմանշային

յուրատեսակ շարքեր: ՀԴՄ-ներում տարբերակվում են հականշային երկանդամ և բազմանդամ շարքեր:

Ինչպես բոլոր դարձվածքների, այնպես էլ ՀԴՄ-ների հականշային շարքն ընդգրկում է նվազագույնը երկու անդամ. դառն ինչպես լեղին – քաղցր ինչպես մեղրը, օխտը դևի հեքիաթի պես երկար – երազի պես անցողիկ, մոմի նման ուզած ձևն ընդունել – կատվի նման մեջքի վրա չընկնել, սնկի նման աճել – ձյան պես հալվել:

Ի տարբերություն ՀԴՄ-ների հականշային երկանդամ շարքերի՝ արդի հայերենում առավել մեծ թիվ են կազմում քննարկվող դարձվածքների բազմանդամ շարքերը: Այս հանգամանքը կապված է ՀԴՄ-ների դարձվածային հոմանիշների, ինչպես նաև նրանց դարձվածային տարբերակների առատության հետ. 1. Ձյունի պես ճերմակ, կաթի // փրփուրի // բամբակի պես սպիտակ – Ածուխի // մազութի // ձյութի // կուարի // մրի // գիշերի պես սև: 2. Արյան // վարդի // վարդի թերթի պես կարմիր – Քաթանի // կտավի // կավճի պես գունատ: 3. Քամու նման թռչել // սուրալ, հողմի պես սլանալ – Կրիայի պես դանդաղ ընթանալ // քայլել, ասես ոտքի տակ ձու լինել: 4. (Ջգալ) ինչպես ձուկը ջրում, ինչպես հավը հավաբնում – (Ջգալ) ինչպես ափ նետված // ջրից հանած ձուկը, ինչպես թռչնակը վանդակում:

3. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների. Հականիշ ՀԴՄ-ներում իմաստային հակադրությունը կարող է դրսևորվել՝

ա) գերադաս անդամների միջոցով. Հոբի պես աղքատ – Կրեսոսի նման հարուստ, առյուծի պես քաջ – նապաստակի նման վախկոտ, ստվերի պես հետևել – փախչել ինչպես ժանտախտից և այլն,

բ) կախյալ (համեմատական) բաղադրիչներով. խոզի պես ուտել – ծտի պես ուտել, հյուրի պես զգալ (իրեն) – զգալ ինչպես իր տանը, շան պես ապրել – վարդի պես ապրել, օրվա պես պարզ – պարզ ինչպես պղտոր գետը և այլն:

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ներում երբեմն և՛ գերադաս, և՛ կախյալ բաղադրիչները միաժամանակ կարող են հականշություն արտահայտել. հավիտենության չափ երկարատև – ակնթարթի պես անցողիկ, օրվա պես պարզ – գիշերվա նման մութ, հրեշտակի պես գեղեցիկ – սատանայի պես տգեղ:

Հականիշ ՀԴՄ-ները կարող են նաև իրենց բառային կազմով միանգամայն տարբեր լինել՝ հակադրություն արտահայտելով զուտ իրենց ընդհանուր իմաստներով՝ անկախ բառային ուղղակի հակադրություններից (Աբրահամյան Ս., 1978): Հմմտ. մոմի նման ուզած ձևն ընդունել (մեկի ուզածի պես վարվել, ենթարկվել) – եզան պես կողքի ընկնել (իր ասածը պնդել, համառել), ասես ասեղների վրա նստած լինել (նյարդային՝ անհանգիստ վիճակում լինել) – կարծես մոր գիրկն ընկնել (հանգիստ՝ անհոգ լինել), մոմի պես այրվել (ողջ կյանքում հանուն ուրիշների բարօրության ապրել) – ուրագի պես միշտ իր կողմը տաշել (միշտ միայն իր մասին մտածել, ամեն ինչ իրեն վերցնել, ընկերոջ և մյուսների մասին չմտածել) և այլն:

Մասնագիտական գրականության մեջ իմաստային առումով առանձնացնում են՝


ա) լիարժեք հականիշներ, որոնց բնորոշ են բառային իմաստի լրիվ հակադրությունը, առարկայական միանման հարաբերակցությունը և ոճական միևնույն առանձնահատկությունը, սակայն դրանք, որպես կանոն, շատ չեն. հավիտենության պես երկարատև – ակնթարթի պես անցողիկ, հրեշտակի նման գեղեցիկ – սատանայի նման տգեղ, օրվա պես պարզ – գիշերվա պես մութ,

բ) նշված կողմերից որևէ մեկով տարբերվող հականիշներ, որոնք ավելի մեծ թիվ են կազմում (Неведомская О., 1973). տղի պես կպչել (խսկց.) – փախչել ինչպես սատանան խնկից (գրք.), նման լինել ինչպես մի սաջի հաց (ժող.) – տարբերվել ինչպես երկիր ու օվկիան (գրք.), խոզի պես կեղտոտ (խսկց.) – բյուրեղի պես մաքուր (գրք.), ծոփ նման թռչել (խսկց.) – կրիայի պես քայլել (խսկց.) և այլն:

4. Հականշություն և բազմիմաստություն. Ընդհանրապես յուրաքանչյուր դարձվածք հոմանիշ կամ հականիշ է համարվում մեկ այլ դարձվածքի ոչ թե ամբողջությամբ վերցրած, այլ իր առանձին իմաստով:

Այսպես, սարի պես կանգնել // ~ ինչպես սարը դարձվածքը բազմիմաստ է. իր առաջին՝ «պաշտպանել» իմաստով այն հականիշ է Պիղատոսի նման ձեռքերը լվանալ (չեզոք դիրք գրավել) դարձվածքին, իսկ երկրորդ՝ «հաստատուն» ուժեղ լինել» իմաստով հականիշ է երեխայի // մանկան նման թույլ // անզոր // անօգնական լինել // զգալ իրեն (խիստ թույլ լինել) դարձվածքին: Հմմտ. 1. Այդքան ասլան – բալասիներ, և թիկունքում սարի պես կանգնած Աբոն, որի կինը հարկադրված չէ ուրիշ շատերի պես ամեն օր մտատանջվել, թե վաղվա ճաշի համար որտեղից ինչ ձեռք բերի (Անահիտ Սահինյան): Զարմանդուխտի նամակը նրան պարզ հայտնել էր, որ ինքը որդիական պարտավորությունից Պիղատոսի նման ձեռքերը լվացել, մի կողմ էր կանգնել, ծնող, ազգական բոլորեքյան կոտորվել են ու իրանց համար գլուխը մահու տալու բնական պարտավորությունից ազատել (Պերճ Պողոսյան): 2. Կանգնեց - Դավիթ, ինչպես սարը, Գըրգուռ սարը մեզ-մշուշում (Հովհաննես Թումանյան): Փոքրիկ երեխայի նման նա անզոր է զգում իրեն (Անահիտ Սեկոյան):

Բազմիմաստ ՀԴՄ-ի՝ յուրաքանչյուր իմաստի համար առանձին հականիշ ունենալու հատկությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Միևնույն ՀԴՄ-ի իմաստային կառուցվածքում a, b, c-ն տարբեր նշանակությունների ցուցիչներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հականիշը: Հմմտ. Լույսի պես – 1. մարմնով շատ սպիտակ, 2. շատ գեղեցիկ, 3. շատ պարզ. 1.

լույսի պես (սպիտակ) – ածխի // մագուրի // մրի // ձյութի պես (սև), 2. լույսի պես (գեղեցիկ) – սատանայի նման (տգեղ), 3. լույսի պես (պարզ) – գորոյան հանգույցի պես (բարդ):

Կրակի նման – 1. շատ աշխույժ, եռանդուն, շարժուն, 2. չափազանց արագ, 3. կատաղի, մոլեգին. 1. կրակի նման (շարժուն, աշխույժ) – արձանի պես, փայտ կուլ տվածի պես (անշարժ, անկենդան), 2. կրակի նման (արագ) – կրիայի նման, մեռածի նման (խիստ դանդաղ), 3. կրակի նման (կատաղի) – գառան // աղավնու նման (հեզ) և այլն:

5. Հականիշ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում. Հականշային երկանդամ և բազմանդամ շարքերի անդամներից յուրաքանչյուրը կարող է օժտված լինել տարբեր հուզարտահայտչականությամբ և գործառվել խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում: Հմտ. փետի նման (բրբ.) – ջանը կրակ ընկածի նման (բրբ.), փետի նման տնկվել (բրբ.) – հոլի պես պտտվել (խսկց.), մեռելի պես սփրթնել (խսկց.) – նորահարսի պես շառագունել (գրք.):

Գեղարվեստական երկերում առավել ցայտուն են երևում հականշային ՀԴՄ-ների հուզարտահայտչական տարբեր գունավորումները: Ստորև բերվող քննադրային օինակներում ակնառու է խնդրո առարկա դարձվածային հականիշների բազմերանգությունը:

1. Ինչպե՞ս. նա ամբողջ օրը խանութում արյուն-քրտինք թափի, շան պես չարչարվի, իսկ կնիկն անառակությո՞ւն անի... (Շիրվանզադե): Ամեն կողմից նշանավոր այդ բեյն առանձնացած ապրում էր տանը, ինչպես իշխանը դղակում (Ակսել Բակունց):

2. Ճղճղացին, ինչպես (անմիտ) Կաչաղակներ լեզվագար (Հովհաննես Թումանյան): Եվ արժե՞ միթե, երբ գիտեմ, որ ես Կարող եմ հիմա Կոճղի պես լռել (Պարույր Սևակ):

3. Սաքոն մի կաթիլ ջրի պես Երևանու մեջ աներևութացավ (Պերճ Պողոջան):

– Ինչո՞ւ ծառ տնկենք,– կարծես գետնի տակից բսնելով՝ մեջ ընկավ Յոթնովիմերանը (Նաիրի Զարյան):

Այսպիսով՝

1. Ըստ ձևաբանական արժեքի՝ ժամանակակից հայերենում առանձնացվում են ածականական, բայական և մակբայական հականշային ՀԴՄ-ներ:

2. Ըստ կազմության՝ տարբերակվում են՝ ա) իրենց բառային կազմում հականիշ (թե՛ գերադաս, թե՛ ստորադաս) անդամ ունեցող, բ) իրենց բառային կազմով լիովին տարբեր հականշային ՀԴՄ-ներ:

3. Իմաստային դիտվածքում առանձնացվում են լիարժեք և ոչ լիարժեք հականիշ ՀԴՄ-ներ:

4. Հականիշ ՀԴՄ-ները, հոմանշային հարաբերությունների մեջ մտնելով այլ ՀԴՄ-ների հետ, կազմում են յուրօրինակ հականշահոմանշային շարքեր:

5. Հականշային ՀԴՄ-ները բնութագրվում են խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում հանդես գալու հնարավորություններով և հուզարտահայտչական տարբեր գունավորումներով:

Ե) Հետադարձ կապ

• Առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք դարձվածային հոմանշություն և բազմիմաստություն, հականշություն և բազմիմաստություն ընդհանարություններն ու տարբերությունները:

2. Բերե՛ք համեմատություն-դարձվածային միավորների հականշային շարքերի օրինակներ:

4. Արտահայտիչ ընթերցե՛ք դասախոսության՝ թեմային համապատասխան բնագրային օրինակները և կատարե՛ք լեզվաոճական վերլուծություններ. հականշություն և խոսքային միջավայր:

5. Իրականացրե՛ք խմբային հետազոտություն՝ կատարելով վերլուծական աշխատանք: Ե. Չարենցի ստեղծագործություններից (օրինակ՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուից, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., «Սովետական գրող»

հրատ., 1987) դո՛ւրս գրեք տասը ՀԴՄ.

1-ին խումբ. Դասակարգե՛ք ըստ ձևաբանական արժեքի, կազմե՛ք դրանց դարձվածային հականշային զույգերը:

2-րդ խումբ. Կազմե՛ք դրանց դարձվածային հականշահոմանշային շարքերը. ցո՛ւյց տվեք հականիշ դարձվածքների հոմանշային հարաբերությունները մյուս դարձվածքների հետ:

3-րդ խումբ. Բազմիմաստ կապակցությունների յուրաքանչյուր իմաստով կազմե՛ք մեկական դարձվածային հականշային զույգ (առկայության դեպքում):

6. Ամփոփե՛ք քննարկված ենթաթեմաները՝ ըստ հարցման:

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Որո՞նք են համեմատություն-դարձվածքները և ոճական ի՞նչ դեր են կատարում գեղարվեստական խոսքում:

2. Ըստ ձևաբանական արժեքի՝ հականիշ ՀԴՄ-ներն ի՞նչ տեսակների են բաժանվում:

3. Ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների՝ հականիշ ՀԴՄ-ներն ի՞նչ խմբերի են բաժանվում:

4. Ի՞նչ յուրահատկություններ են դրսևորում ՀԴՄ-ների հականշային շարքերը:

5. Ի՞նչ առանձնահատկություններ են ի հայտ բերում հականիշ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում:

Թեմայի գնահատում: Վերջինս իրականացվում է առարկայական նկարագրի՝ **գնահատման չափանիշներ (մեխանիզմներ)** սյունակի պահանջներին համապատասխան:

Գործնական պարապմունք

ա) Գործնական պարապմունքի թեմայի անվանում. Հականշությունը համեմատություն-դարձվածային միավորներում

բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր. հականշությունը համեմատություն-դարձվածային միավորներում. հականիշ ՀԴՄ-ների

դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի, ՀԴՄ-ների հականշային շարքերը, հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների, հականշություն և բազմիմաստություն, հականիշ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում:

գ) Գործնական պարապմունքի անցկացման մեթոդներ, հնարներ և միջոց(ներ):

Խմբավորում, վարժություններ, առաջադրանքներ, հարցում, հասկացությունների քարտեզ, համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացում:

դ) Գործնական պարապմունքի թեմային առնչվող ուսումնառության նյութեր և էլեկտրոնային նյութեր. Վարժություններ .

1. Հետևյալ համեմատություն-դարձվածքները խմբավորել ըստ հականշային հարաբերության.

Քամու նման, խոզի նման կեղտոտ, կմախքի պես նիհար, աշխարհի չափ, մետաքսի պես, եղունգի չափ, սարի չափ, քարի պես, ինչպես երկինք ու երկիր, գայլի պես լափել, կարծես մորից նոր ծնվել, ծտի չափ ուտել, թրջված մկան պես լինել, տաշեղի նման թեթև, ինչպես մի ծառի պտուղ, կրիայի պես, թռչունի կտուցի չափ, խոզի պես գեր, քարի պես ծանր, բյուրեղի պես մաքուր:

2. Հետևյալ հականիշ համեմատություն-դարձվածքները խմբավորել ըստ ձևաբանական արժեքի:

Կորեկի չափ - սարի չափ, կարծես այս աշխարհում չլինել – թրջված հավի նման լինել, քաթանի պես գունատվել – նորահարսի պես շառագունել, կոճղի նման կարճահասակ – չինարի պես բարձրահասակ, վարդի պես - սատանայի նման, ջահի պես վառվել – ուրագի պես միշտ իր կողմը տաշել, շուն ու կատվի պես - մի դռան երկու շան նման, մի դռան շան նման յուրա գնալ – ապրել ինչպես շուն ու կատու, ավանակի պես անխելք – Սողոմոնի նման իմաստուն, կարծես այս աշխարհում չլինել – թրջված հավի նման լինել, տաշեղի նման թեթև – կապարի

պես ծանր, սոխակի պես գեղգեղալ – ագռավի պես կռռալ, դառն ինչպես լեղին – քաղցր ինչպես մեղրը:

3. Հետևյալ հականշային տարարժեք զույգը գործածել նախադասություններում թե՛ իբրև ածականներ, թե՛ իբրև մակբայներ՝ ըստ շարահյուսական կիրառության.

Քորոցի գլխի չափ – աշխարհի չափ:

4. Նշե՛ք հետևյալ ՀԴՄ-ներից յուրաքանչյուրի՝ ՀԴՄ-ով արտահայտված հականիշը. 1. դառն ինչպես լեղին –, 2. ավանակի պես անխելք –, 3. կոճղի նման կարճահասակ –, 4. կապարի պես ծանր –, 5. մի դռան շան նման յոլա գնալ –, 6. սոխակի պես գեղգեղալ –:

5. Կազմե՛ք հետևյալ հականշային զույգերից յուրաքանչյուրի հոմանշային շարքը՝ ձևավորելով հականշություն հոմանշային շարքերի միջև:

Գնդասեղի գլխի չափ – սարի չափ:

Կարծես մի ծանր բեռ ընկնել ուսերից – քարի պես ծանրանալ սրտին:

Շան նման չարչարել – վարդի պես պահել:

Կաչաղակի նման շաղակրատել – քար զցած գորտի պես ձայնը կտրել:

Ասես գետնի տակն անցնել – ասես երկնքից հայտնվել:

Նմուշ՝ ջանը կրակ ընկածի նման լինել – մումիայի նման անշարժանալ

1. Զանը կրակ ընկածի նման լինել, հողի նման պտտվել, անիվի պես դառնալ, սատանի չարխի պես պտույտ գալ (հոմանիշ ՀԴՄ-ներ):

2. Մումիայի նման անշարժանալ, փայտ // շամփուր կուլ տվածի նման լինել, քարի պես արձանանալ, արձանի նման կանգնել (հոմանիշ ՀԴՄ-ներ):

3. Զանը կրակ ընկածի նման լինել, հողի նման պտտվել, անիվի պես դառնալ, սատանի չարխի պես պտույտ գալ – Մումիայի նման անշարժանալ, փայտ // շամփուր կուլ տվածի նման լինել, քարի պես արձանանալ, արձանի նման կանգնել (հականշություն հոմանշային շարքերի միջև):

6. Նշե՛ք, թե հետևյալ հականիշ ՀԴՄ-ներում իմաստային հակադրությունը ինչո՞վ է դրսևորվել՝

ա) գերադաս անդամների միջոցով,
 բ) կախյալ (համեմատական) բաղադրիչներով,
 բ) և՛ գերադաս, և՛ կախյալ բաղադրիչներով,
 գ) զուտ իրենց ընդհանուր իմաստներով՝ անկախ բառային ուղղակի հակադրություններից:

Մոմի պես փափուկ - կապարի նման կարծր, հավիտենության չափ երկարատև- ակնթարթի պես անցողիկ, առյուծի պես քաջ - նապաստակի պես վախկոտ, թթվածնի պես անհրաժեշտ լինել - հերվա ձյան պես անհրաժեշտ լինել, մոմիայի պես անշարժանալ - սնդիկի պես շարժվել, ցուրտը թրի նման կտրել - բոլորած թոնրի նման լինել, ասես ասեղների վրա նստած լինել - կարծես մոր գիրկն ընկնել, օրվա պես պարզ- գիշերվա նման մութ, հեղեղի պես թափվել - ասես դանակով կտրել, շան պես ապրել- ապրել ինչպես իշխանը դրյակում:

ե) Հետադարձ կապի ապահովում և ստուգում (գնահատում)

Հարցեր

1. Ըստ խոսքիմասային պատկանելության՝ հականիշ ՀԴՄ-ների ի՞նչ տեսակներ գիտեք: Որո՞նք են տարարժեք ՀԴՄ-ները:
2. Ըստ կազմության՝ հականիշ ՀԴՄ-ներն ի՞նչ խմբերի են բաժանվում:
3. Որո՞նք են լիարժեք և ոչ լիարժեք հականիշ ՀԴՄ-ները:
4. Ի՞նչ փոխհարաբերություններ են դրսևորում հականշությունը և բազմիմաստությունը, այլև հոմանշությունը և հականշությունը:

Առաջադրանքներ

1. Ինքնուրույն-հետազոտական աշխատանք. Կատարե՛ք թեմայի շուրջ բառարանային աշխատանք. Պ. Ս. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից» (Բեդիրյան Պ., 2011) դո՛ւրս գրեք առնվազն յոթ այնպիսի ՀԴՄ-ներ, որոնք ունեն իրենց հականիշը:

ա) Կազմե՛ք այդ դարձվածային միավորների հականշահոմանշային շարքերը (հականշություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև):

բ) Համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով (մինչև 7 սահիկ) դրանք ներկայացրե՛ք առցանց ուսուցման հարթակում:

2. Կապակցված խոսք. Ինքնուրույն շարադրե՛ք սկիզբը և շարունակությունը¹ (մեկ էջի սահմաններում)՝ գործածելով հականիշ ՀԴՄ-ներ. Նրա ականջների մեջ դեռ զարկում էին մոր կծու խոսքերը և սուր սլաքների նման թափանցում էին մինչև սրտի խորքը (Րաֆֆի):

3. Ամփոփում. Ըստ հասկացությունների քարտեզի՝ ամփոփե՛ք քննարկված թեման:

Թեմայի գնահատում: Վերջինս իրականացվում է առարկայական նկարագրի՝ **գնահատման չափանիշներ (մեխանիզմներ)** սյունակի պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բուհերի բանասիրական ֆակուլտետներում հականիշ ՀԴՄ-ների (տեսական և գործնական) ուսուցումը կարող է նպաստել ընդհանրապես դարձվածքների ձևաիմաստային այս խմբի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

2. Կարևոր է հականիշ ՀԴՄ-ների դասակարգումը՝ ըստ ձևաբանական արժեքի, ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների, քննարկվող դարձվածքների բազմիմաստության և հականշության, հականշային զույգերի (շարքերի) և խոսքային միջավայրում նրանց բազմերանգության վերհանումը:

3. Ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները հարկ է կիրառել գործնականում՝ ըստ տարաբնույթ վարժությունների և առաջադրանքների: Կարևորվում են բառարանային և վերլուծական աշխատանքները, կապակցված խոսք կազմելը և, առհասարակ, ուսանողների ինքնուրույն աշխատանքներ

¹ Պահանջվում է պահպանել ուղղագրական, կետադրական, քերականական և ոճական անհրաժեշտ կանոնները, ինչպես նաև խմբագրական աշխատանք կատարելուց հետո կապակցված խոսքն արտահայտիչ ընթերցանությամբ ներկայացնել լսարանում:

կատարելու հմտությունների մշակումը: Առաջարկվում է կիրառել փոխներգործուն ուսուցումն ապահովող գծագրական դասակարգիչներ, ինչպես նաև ուսուցման միջոցներից մեկը՝ համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ս. (1978)**, Հայոց լեզու, բառ և խոսք, Երևան, «Լույս» հրատ.:
2. **Ավետիսյան Լ. (2018)**, Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
3. **Բադիկյան Խ. (2000)**, Դարձվածային ոճաբանություն, Երևան, Եր. համալս. հրատ.:
4. **Բեդիրյան Պ. (2011)**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. **Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ. (2015)**, Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Երևան, «Զանգակ» հրատ.:
6. **Սարուխանյան Ս., Դավաթյան Ա., Դիշաղաջյան Ն. (2008)**, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, «Վանատուր» հրատ.:
7. **Игнатьева Л. (1976)**, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразообразующим компонентом «как» в современном русском языке, АКД, Ленинград, Изд-во ЛГПИ.
8. **Неведомская О. (1973)**, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, Ленинград, Изд-во ЛГУ.
9. **Раджабов Б. (2017)**, Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции “Наука нового времени: от идеи к результату” 18-19

августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во “КультИнформПресс”, с. 79-81.

REFERENCES

1. **Abrahamyan S. (1978)**, Hayoc lezow, bar' & xosq /Armenian Language, word and speech/, Yerevan, “Luys”.
2. **Avetisyan L. (2018)**, Hamematowt'yown-dard'vac'ayin miavorneri' jhamanakakic hayerenowm /The comparative phraseological units in Modern Armenian Language/, Yerevan, “Edit Print”.
3. **Badikyan Kh. (2000)**, Dard'vac'ayin otwabanowt'yown /Phraseological stylistics/, Yerevan, YSU Publishing House.
4. **Bediryan P. (2011)**, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrankan bar'aran /Extensive Explanatory Dictionary of Armenian Idioms/, Yerevan, YSU Publishing House.
5. **Khachatryan L., Avetisyan L. (2015)**, Hamematowt'yown-dard'vac'ayin artahaytowt'yownneri' hayerenowm (V-XVI dd.) /The comparative phrases in Armenian Language (V-XVI centuries)/, Yerevan, “Zangak”.
6. **Sarukhanyan S., Dallak'yan A., Dishaghajyan N. (2008)**, Owsowcman jhamanakakic met'odner, hnarner, varjhowt'yownner /The modern methods, methodological approaches, exercises of teaching/, Vanadzor, “Vanatur”.
7. **Ignat'yeva L. (1976)**, Strukturnyye i semanticheskiye svoystva frazeologicheskikh yedinit s frazobrazuyushchim komponentom «kak» v sovremennom russkom yazyke /The structural and semantic specifications of phraseological units with phrase-forming component “like” in Modern Russian Language/, ACD, Leningrad, LSPI ed.
8. **Nevedomskaya O. (1973)**, Komparativnyye frazeologizmy nemetskogo yazyka v sopostavlenii s russkimi /The comparative phrases of German Language compared to Russians/, ACD, Leningrad, LSU ed.

9. **Radzhabov B. (2017)**, Sovremennyye metody obucheniya studentov s ispol'zovaniyem IKT v usloviyakh Respubliki Tadzhikistan /The modern methods of teaching students using ICT in the conditions of the Republic of Tajikstan, Collection of scientific articles based on the results of International Scientific and Practical Conference “Science of the New time: from idea to result”/, Saint-Petersburg, “Kul’tInformPress”, p. 79-81.

Лилит Аветисян

Изучение антонимии компаративных фразеологических единиц в вузе

Заключение

Ключевые слова и выражения: компаративные фразеологические единицы (КФЕ), классификация антонимических КФЕ с точки зрения их состава и смысловых особенностей, антонимические адъективные, глагольные и адverbальные КФЕ, антонимо-синонимические ряды КФЕ, антонимия и полисемия, антонимия и речевая среда, вузовский курс, интерактивные методы, методические приемы.

Компаративные фразеологические единицы (далее - КФЕ) представляют собой устойчивые, воспроизводимые в готовом виде и переинтерпретированные словосочетания. Среди номинативных КФЕ современного армянского языка адъективные, глагольные и адverbальные антонимические КФЕ различаются. Антонимичные КФЕ классифицируются с точки зрения их состава и смысловых особенностей. Для многозначных КФЕ характерны синонимические и антонимические отношения. Синономия и полисемия, а также антонимия и полисемия имеют явную общность: одно и то же ФЕ вступает в синонимические и антонимические отношения не целостно, а со своими частными значениями. Экспрессивно-эмоциональные различные оттенки, семантические противопоставление антонимичных КФЕ более ярко проявляются в речевой среде.

В данной статье рассматриваются вопросы изучения антонимии КФЕ современного армянского языка на филологических факультетах высших учебных заведений в рамках лекции, а также практических занятий. Во время изучения антонимических рядов КФЕ необходимо рассматривать эти ряды параллельно со синонимическим рядам: антонимичные КФЕ вступают в синонимические связи с другими КФЕ, образуя антонимо-синонимические своеобразные ряды. Предлагается практическое применение полученных студентами теоретических знаний, базирующееся на таких методических приемах как группирование и картографирование понятий, метод текстовой работы и группового исследования, выполнение словарной и творческой работы, заданий и упражнений, создание презентаций с помощью Microsoft Power Point (или Google), и проведение опроса.

Lilit Avetisyan

The study of antonymy of comparative phraseological units at the Institute**Conclusion**

Key words and phrases: *comparative phraseological units (CPU), classification of antonymic CPU by structure and semantic characteristics, adjectival, verbal and adverbial antonymic CPU, synonymic-antonymic lines of CPU, antonymy and polysemy, antonymy and speech environment, case study at the Institute, interactive teaching methods, methodological approaches.*

The comparative phraseological units (CPU) built on imagination are stable binominal compounds, those components are linked. Among nominative CPU of modern Armenian adjectival, adverbial and verbal antonymic compounds are distinguished. Antonymic CPU can also be classified by their structure and semantic characteristics. The synonymous and antonymous relations are typical of the polysemantic CPU. In general synonymy and polysemy, antonymy and polysemy have obvious generalities: the same PU gets a synonymic or antonymic correlation with other PU not entirely, but by its separate meanings. Different emotionally expressive colorings, semantic contrast of antonymic CPU are more brightly demonstrated in the speech environment.

This article examines the questions of teaching modern Armenian antonymic CPU by discovering of the relationship of polysemy and antonymy in the philological faculties of the university system (according to the lectures and practical lessons). Recurring to the antonymic lines of the CPU it is necessary to observe them in parallel with synonymic lines: antonymic CPU are included into synonymic correlation with other CPU making certain synonymic - antonymic lines. Recommended to apply students' acquired theoretical knowledge in practice according to the chunking and concepts map methodological approaches, text work and group research methods, dictionary and creative works, computer Microsoft Power Point (or Google) presentation, question, as well as according to performing of exercises and tasks.

Լիլիթ Ավետիսյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, գրաբար, ժամանակակից հայոց լեզու և նրա դասավանդման մեթոդաբանական հարցեր: Հեղինակ (այլև համահեղինակ) է 5 գրքի և 36 գիտատեսական և գիտամեթոդական հոդվածների: lilit.avetisyan1981@mail.ru

Лилит Аветисян – Кандидат филологических наук, доцент кафедры армянского языка и методики его преподавания АГПУ имени Х. Абовяна. Сфера научных интересов: Лингвистика, история армянского языка, грабар, современный армянский язык и методологические вопросы их преподавания. Является автором (а также соавтором) пяти книг и 36 научных статей. lilit.avetisyan1981@mail.ru

Lilit Avetisyan– PhD of Philological Sciences, Associate Professor of the Chair of Armenian Language and its Teaching Methods of ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Linguistics, history of Armenian Language, old Armenian, modern Armenian and methodological issues of their teaching. Author (and co-author) of five books and 36 scientific articles. lilit.avetisyan1981@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 21.12.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 08.01.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.